



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



10633

658

7-39







51  
1038



150

2002




ԱՌԱՋՆՈՐԴ  
ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ  
Կ Ա Մ  
ՏԱՐԵՐՔ  
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ


ՄԻՄՕՆ ՁԷՕՄԱԿՔՃԵԱՆ  
Թղթակից-Ուսանող Բարիզի Առեւտրական  
գործնական վարժարանին  
(Ecole Pratique de commerce de Paris)

Ծ Ր Ա Գ Ի Ր

Պատմութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տանկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր գիտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սակարանական եւ պանրայի հաշիւներ եւայլն.



ՀԱՍՏՈՐ Բ. — ՏԵՏՐ Դ.



Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐ.ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1902



# Քանի մը Խորհուրդ

ԱՌԵԵՏՐԱԿԱՆ ՈՃԻ ՎՐԱՅ

Առեւտրական նամակը պէտք է պարզապէս պարունակէ ինչ որ գործի մը վրայ կ'ըսուի բերանացի: Ուրեմն կարճութիւն և յտակութիւն այս կարգի նամակներու էական յատկութիւններն են: Հիմակ որ վաճառականութիւնը, հանրային հարստութեան այս հարուստ աղբիւրը, հետզհետէ սկսած է բարձր արհեստ մը ըլլալ, հարկ է լեզուն ալ բարձրացնել և ջնջել այն սնամէջ դարձած քնքերը, իծալուր բացատրութիւններն և բարբարիկ ասացուածները զորս տակաւին կը գործածեն հին գլուխ վաճառականները, համոզուած ըլլալով թէ նամակ մը զուտ վաճառականական ըլլալու համար պէտք է ունենայ այս անտանելի թերութիւնները: Առեւտրական նամակներէն շատոնց վտարուած են արտողական աւելորդ ձեւերը, որք պարսպ մարդերու համար միայն կարեւորութիւն ունին: Պէտք է պարզ ըսել, կարեւորը միայն ըսել, և պատշաճ կերպով ըսել, այսինքն տարրական քաղաքավարութենէ չհեռանալ: Քաղաքավար թղթթակից մը կը դրաւէ դիմացինը, ինչպէս քաղաքավար խօսող մը հաճելի կ'ըլլայ խօսակցին: Քիչ բառով շատ բան ըսելու պէտք կը վերցնէ, կը ջնջէ ամէն յտաջարան և ամէն փոխանցում: Նամակները կրնան ուրեմն անջատ հատուածներէ բաղկանալ, իւրաքանչիւրը զատ գործի վրայ, առանց ո' և է կապակցութեան: Թղթակցութիւնը երկու վաճառականներու միջեւ կը կազմէ շղթայ մը որուն օղակներն են փոխանակուած նամակները: Հետեւապէս, առաջին հատուածին մէջ պէտք է ծանուցանել նախորդ նամակին ստացուած



ըլլալը, կամ հաստատել զրուած վերջին նամակը, եթէ առանց պատասխանի մնացած է: Այս կերպով նամակները կը կազմեն շարունակութիւն մը զոր զիւրին է աչքէ անցընել առանց թելը կորսնցնելու: Վէճի տակ եղած դժուարին ու կնճռոտ գործերու մէջ մեծ խնամքով աչքէ անցընելու է նախապէս զրուած նամակները, վիճարանութեան հոգիին աղէկ մը թափանցելու համար: Պէտք չէ մանաւանդ մոռնալ թէ երբ այդպիսի նիւթի վրայ նամակ կը գրուի, sofiւման մ'է որ կը յանձնուի հակառակ կողմին: Ուստի անհրաժեշտ է անոր ամէն մէկ բառերը կշռել և այնպէս գրել:

Ա.

### Շրջաբերականներ

Շրջաբերականը նամակ մ'է որուն ընդօրինակութիւնը կը զրկուի շատերու: Ասոր համար է որ շրջաբերականները տպուած կ'ըլլան միշտ: Շրջաբերականին նպատակն է սովորաբար ծանուցանել առեւտրական տան մը հաստատութիւնը, ընկերութեան մը կազմութիւնը կամ լուծումը, վաճառատան մը մէջ պատահած ո՛ր և է փոփոխութիւն, ինչպէս նոր ընկերոջ մը մասնակցութիւնը, ընկերներէն միոյն գործէ քաշուիլը կամ մահը ևն. ևն.: Շրջաբերական մը, որովհետեւ շատ անձերու միանգամայն զրկուած է, ընդունողին համար երկրորդական կարեւորութիւն ունի, թէեւ զրկողին համար խիստ կարեւոր է: Ուստի, ընդունուած սովորութիւն է որ անպատասխանի կը թողուի. առանց անքաղաքավար նկատուելու: Ամէն շրջաբերականի մէջ նախ պէտք է գիտցնել ձեռնարկուած առեւտրական գործին տեսակը, ընկերային անունը և ընկերներուն ստորագրութիւնը: Յետոյ ի վեր հանելու է զանազան առաւելութիւններ, ինչպէս կարեւոր դրամագլուխ դրուիլը, նոյն առեւտրական գործին վրայ մասնաւոր ծանօթութիւններու հմտութիւնը, եւ վերջապէս այն ամէն պարագաներ որք կրնան առաւելութիւն

մը տալ միւս մրցակիցներուն վրայ: Բայց անոնք որ չեն կրնար այսպիսի դրական առաւելութիւններ ընծայել, անոնց պակասը կը լեցնեն խօսելով իրենց եռանդին ու գործունէութեան վրայ: Վերջապէս շրջաբերականը կ'աւարտի ընկերներու ստորագրութիւններով, որոց վրայ կը հրաւիրուի շրջաբերականն ընդունողին ուշադրութիւնը: Այս կարգի նամակներու մէջ կարելի է գրաւիչ ու բարեկիրթ լեզուով խօսիլ, բայց առանց արուեստակեալ ձեւերու, վասնզի շրջաբերականին պարունակած բառերն ամէնուն համար տըպուած ըլլալով կը նկատուին տեսակ մը ֆորմիլ, զոր չափաւոր կերպով գործածելու է: Վաճառականներէ ոմանք, աւելի կշիռ տալու համար իրենց խնդրանքին զոր կ'ուզէին այնպիսի անձերու, որոց անձանօթ են իրենք, շրջաբերականին մէջ կը նշանակեն առեւտրական հրապարակի վրայ ծանօթ վաճառականներու անունները, որոցմէ կարելի է տեղեկութիւն առնել իրենց պատուաւորութեան մասին: Եթէ այս նախահոգութիւնն ընդհանրանայ, անշուշտ աւելի յանձնարարելի հանգամանք մը կուտայ շրջաբերականներուն, վասն զի ընդունողը վստահութիւն մը կը գոյացնէ զոր պիտի չունենար անձանօթ կամ ոչ-յանձնարարեալ վաճառականներու համար: Երբ առեւտրական տան մը պետը գործէ կը քաշուի եւ յաջորդին կը թողու իր գործին շարունակութիւնը, այն ատեն երկու շրջաբերական կը գրուի: Առաջինով, վաճառատան պետը շնորհակալութիւն կը յայտնէ իրեն եղած վստահութեան համար և իր յաջորդը կը յանձնարարէ: Երկրորդով, յաջորդը կը խնդրէ այդ վստահութեան շարունակութիւնը: Տպեալ շրջաբերականին հետ յաճախ ձեռագիր նամակ մ'ալ կը զրկուի, աւելի մտերմական բառերով, ուր մասնաւոր առաջարկութիւններ կ'ըլլան:



CIRCULAIRES

Cons/ple, le 20 Fev. 1902

Monsieur,

Nous avons l'honneur de vous prévenir qu'à dater du 1er Mars prochain nous formerons dans cette ville une maison de commerce, sous la raison . . .

Nous nous occuperons essentiellement de la vente en commission de toute espèce de marchandises.

Veillez prendre note de nos signatures, et agréer, Monsieur, avec l'offre de nos services, nos salutations respectueuses.

Références

Cons/ple, le 20 Fev. 1902

Monsieur,

Nous portons à votre connaissance que notre sieur . . . désirant quitter les affaires, se retire, à dater de ce jour, de notre maison. Sa retraite, en nous laissant le vif regret d'être privés de sa coopération et de ses lumières, n'apporte d'ailleurs aucun changement dans nos affaires, ni dans l'amitié qui nous a toujours unis.

Nous vous présentons, Monsieur, l'assurance de notre considération.

Monsieur,

Comme vous l'annonce la circulaire d'autre part, j'ai l'honneur de vous prévenir qu'à dater du 1er Mars prochain, je continuerai pour mon compte particulier et dans la même maison que j'habite avec M. Didier, mon beau-père, le même genre d'affaires et les mêmes opérations que je traitais conjointement avec lui.

Des capitaux suffisants, la prudence et l'activité dont je continuerai de me faire une loi, seront, comme par le passé, mes titres à votre confiance.

J'ai l'honneur de vous saluer.

. . .

( Sur le verso , est écrit à la main )

Ayant le plus vif désir de me lier d'affaires avec une maison aussi honorable que la vôtre, Monsieur, j'ai pris la liberté de vous adresser ma circulaire. Veuillez la prendre en considération, et me faire une petite demande pour essai; vous pourrez juger de ma manière d'opérer.

Monsieur,

Nous avons l'honneur de vous informer que nous avons donné à M. . . , intéressé dans notre maison, notre procuration générale. Vous avez au bas de la présente la signature de M. . . , et nous vous prions d'y ajouter foi comme à la nôtre.

Nous vous présentons, Monsieur, nos civilités respectueuses.

. . .

M. . . signera . . .



ԹԷ ՈՐՈՒՔ ՉԵՆ ԿՐՆԱՐ

# Վաճառականութիւն ընել

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

Առեւտրական եւ շահարարութեան Թրէնարութեան

Դ . Հ Ա Յ Ո Ւ Ա Մ

Վաճառականութիւն ընելու համար պէտք եղած  
Կարողութիւնը (Capacité)

Անկարողութիւն եւ անոր հետեւանքները . — Մարդիկ ու մանք օրէնքով անկարող ճանչցուած են վաճառականութիւն ընելու : Ասոր հետեւանքը սա կ'ըլլայ որ անկարողին կատարած գործերն ըստ օրինի անվաւեր կը նկատուին : Վաճառականութիւն ընելու անկարող են մտքի տկարութիւն ունեցողները , անչափահասներն ու ամուսնացեալ կիները : Սակայն մտային խանգարում ունեցողներու անկարողութեան և անչափահասներու և ամուսնացեալ կիներու անկարողութեան մէջ մեծ տարբերութիւն կայ : Արդարեւ , մինչ առաջիններուն անկարողութիւնը բացարձակ է եւ չի կրնար դադարիլ ցորչափ տեւէ մտային խանգարումը , ընդհակառակը անչափահասին եւ ամուսնացեալ կնոջ անկարողութիւնը կը բնայ դադարիլ ինչ ինչ արտօնութեամբ : Արտօնութեան ձեւերն ու արդիւնքները տարբեր են անչափահասներու և ամուսնացեալ կիներու համար :

Անչափահասը , այսինքն ան որ 21 տարեկանէն վար է , ընդհանրապէս անկարող կը նկատուի ինքն իր գլխուն գործելու : Խնամակալ մը կ'ունենայ որ իր գործերուն կը նայի եւ իր ներկայացուցիչը կ'ըլլայ այն զանազան գործերուն մէջ , ուր ինք չաչ ունի : Անչափահասը , վաճառականութիւն

ընելու համար , կրնայ ազատ հռչակուիլ այս անկարողութենէն : Երեք պայմաններ պէտք են , որպէսզի անչափահասը կարենայ վաճառականութիւն ընել : — Ա . 18 տարուն լրացուցած ըլլալ : — Բ . Մասնաւորապէս արտօնուած ըլլալ վաճառականութիւն ընելու համար : Այս արտօնութիւնը Նօտարի մը առջեւ կը տրուի անչափահասին հօրմէն , կամ ի բացակայութեան անոր , ժօրմէն : Եթէ անչափահասը ծնողք չունի , այն ատեն արտօնութիւնը կը տրուի ընտանեկան ժողովի մը որոշմամբ . որ պէտք է հաստատուի ու վաւերացուի անչափահասին բնակած տեղւոյն քաղաքային դատարանին կողմէ : Այս ձեւակերպութեան պէտք չկայ երբ անչափահասն արտօնուի իր հօր կամ ժօր կողմէ : — Գ . — Արտօնութիւնը պէտք է արձանագրուի առեւտրական դատարանին մէջ այն տեղւոյն ուր անչափահասը մտադիր է վաճառականութիւն ընել : Արտօնութիւնը դատարանին տեսրակին մէջ արձանագրուելէ զատ ունկնդիրներու սրահին մէջ ալ կը կախուի : Այս վերջին ձեւակերպութիւն , որ պէտք է ամէն պարագայի մէջ կատարուի , նստակ ունի հասարակութեան ծանուցանել թէ անչափահասն իր անկարողութենէն ազատ հռչակուած է և կարելի է աներկիւղ գործել անոր հետ : Երբ այս բոլոր պայմանները կատարուին , անչափահասը կարող կ'ըլլայ ամէն առեւտրական գործ ընել : Կրնայ նոյն իսկ , իր գործին պէտքերուն համար , փոխառութիւն կնքել և զբաւի դնել իրեն պատկանած անշարժ ըստացուած քները , առանց կատարելու այն օրինական ձեւերը , որք կը պահանջուին սովորական անչափահասներու անշարժ ստացուած քները գրաւի դնելու համար , այն է ընտանեկան ժողովի որոշում և այդ որոշման վաւերացումը դատարանին կողմէ : Բայց անչափահասը , ինչ ալ ըլլայ , չի կրնար իր անշարժ ստացուած քները ծախել առանց այս ձեւակերպութիւնները կատարելու : Սովորական անչափահասը , իր անկարողութեան վրայ հիմնուելով , կրնայ իր յանձնառութիւնները չկատարել եթէ իրեն վնասակար են , բայց անչափահաս վաճառականը վերջնապէս կապուած է իր յանձնառութիւններուն զորս պարտի կէտ առ կէտ գործադրել :



Անոր ըրած գործերը նոյն արժէքը ունին ինչ արժէք որ պիտի ունենային երբ գործողը չափահաս մէկն եղած ըլլար:

Ամուսնացած կիներ. — Ամուսնացած կիներ չի կրնար իր ստացուածքն ուղածին պէս գործածել, ո՛չ ալ յանձնառութիւն ընել, առանց արտօնութեան իր ամուսնին կամ դատարանին: Այս արտօնութիւն ընդհանուր չէ, այսինքն ամուսնացած կին մը՝ ընել ուղած մէն մի գործին համար մասնաւոր արտօնութեան կը կարօտի: Առանց ամուսնին կամ դատարանի մը արտօնութեան կնոջ կատարած գործերը կըրնան չեղեալ նկատուիլ կնոջ կամ ամուսնին պահանջմամբ:

Վաճառականութիւն ընելու արտօնութիւնն եւ անոր հետեւեալները. — Ամուսնացեալ կին մը չի կրնար վաճառականութիւն ընել առանց իր ամուսնին արտօնութեան: Բայց եթէ անգամ մը արտօնուի, կրնայ իր վաճառականութեան վերաբերեալ ամէն գործ ընել, ինչպէս գնում, վաճառում, յանձնառութիւն, փոխանակագրերու ստորագրութիւն, առանց մասնաւոր արտօնութեան պէտք ունենալու: Կնոջ ըստանձնած առեւտրական յանձնառութիւնները միայն կինը չեն պարտաւորեր, այլ ամուսինն ալ: Պահանջատէրք իրաւունք ունին կնոջ և ամուսնին անձնական գոյքերէն առնել իրենց պահանջը: Վաճառական կինը կրնայ, իր գործին պէտքերուն համար, գրաւի դնել կամ ուրիշ փոխանցել իր անշարժ կալուածները:

Ո՞ր պարագային մէջ կիներ վաճառական կրնայ նկատուիլ. — կինն այն ատեն միայն վաճառական է, երբ իրեն յատուկ գործ մ'ունի, ամուսնին գործէն անկախ:

Յաճախ կը պօտահի որ ամուսինը վաճառական ըլլալով, կինն իր գործին մէջ կ'առնէ, հաշիւները, տետրակները կամ սնտուկը բռնել կուտայ: Այս պարագային մէջ, կինը վաճառական չի նկատուիր, այլ ամուսնին մէկ պաշտօնեան, եւ անձնապէս պատասխանատու չէ ըրած գործերուն համար:



Ժ Գ . — ԽԱՐՔԱՅԻՆ (Մամուրէդ-իւ-Ազիզ)

Բնակիչ 600,000: Տարածութիւն 37, 860 քառ. քիւմ, Ունի 3 սանճաք, 13 քաղա, 70 նահիյէ, 1890 դիւղ:

1. — Խարբուղի սանճաք

1. — Խարբուղ	գղխմ. 8	դիւղ 279
2. — Արաբկիր	» 2	» 61
3. — Կապան մատէն	» 5	» 61
4. — Էկին	» 5	» 83
5. — Բիգուրկի	» 7	» 105

2. — Մալաթիայի սանճաք

1. — Մալաթիա	գղխմ. 4	դիւղ 66
2. — Հիւսնի մանսուր	» 5	» 174
3. — Պէհէսնի	» 5	» 115
4. — Աքճէ տաղ	» 7	» 122
5. — Բեախիթէ	» 3	» 146

3. — Տերսիսի սանճաք

1. — Տէրսիս	գղխմ. 2	դիւղ 106
2. — Մազկերտ	» 3	» 201
3. — Չարսանճաք	» 3	» 110
4. — Չմկաճաք	» 3	» 95
5. — Բըզըլ քիլիսէ	» 2	» 33
6. — Օվաճըք	» 3	» 83

Ժ Գ . — Պ Է Ր Ո Ւ Թ

Բնակիչ 600,000: Տարածութիւն 30,500 քառ. քիւմ, Ունի 5 սանճաք, 16 քաղա, 43 նահիյէ, 3057 դիւղ:



1. — Պերուքի սանճաք

1. — Սայտա	գղխմ. 3	գիւղ 149
2. — Սուր	» 3	» 145
3. — Մէրճիուն	» 2	» 59

2. — Ախալի սանճաք

1. — Աքքա	գղխմ. 3	գիւղ 58
2. — Հայֆա	» 1	» 62
3. — Դիպէրիա		» 30
4. — Սաֆէտ		» 78
5. — Նազարա		» 27

3. — Տրիպոլսոյ (Շամ քարապլուս) սանճաք

1. — Տրիպոլիս (Սուրիական) գղխմ. 5	գիւղ 91
2. — Սաֆիղա	» 301
3. — Աքեար	» 174
4. — Հիւսն էլ քրատ	» 106

4. — Լազիքի սանճաք

1. — Լազքիյէ	գղխմ. 4	գիւղ 181
2. — Ճէպլէ	» 4	» 256
3. — Մէրքապ	» 5	» 569
4. — Սէհիուն	» 4	» 434

5. — Նապլուսի (Պէլիս) սանճաք

1. — Նապլուս	գղխմ. 2	գիւղ 46
2. — Ճէմին (Սալդի)	» 2	» 90
3. — Պէնի Սախա	» 2	» 43
4. — Ճէմարին	» 2	» 49

Ժ Ե. — Վ Ա Ն

Բնակիչ 450,000 : Տարածութիւն 40,000 քառ. ջրմ.  
Ունի 2 սանճաք, 13 քաղա, 9 նահիյէ, 1591 գիւղ :

1. — Վանայ սանճաք

1. — Վան	գղխմ. 3	գիւղ 172
2. — Կարճկան		» 79
3. — Մահմուտի	» 1	» 83
4. — Շրապ	» 1	» 162
5. — Ատիլճէվազ		» 44
6. — Քեազազ		» 59
7. — Էրճիչ		» 122
8. — Պարկիբի		» 121
9. — Մոկս		» 53

2. — Հեհարի սանճաք

1. — Հէքեարի	գղխմ. 1	գիւղ 144
2. — Ճուլամէրկ		» 165
3. — Քիէվար	» 2	» 184
4. — Շէմարինան	» 1	» 131
5. — Մամուրէթ-իւլ-Համիտ		» 34
6. — Պէյղ-իւլ-Ղիւպապ		» 31

Ժ Զ. — Տ Ի Ա Ր Պ Է Ք Ի Բ

Բնակիչ 450,000 : Տարածութիւն 46,824 քառ. ջրմ.  
Ունի 3 սանճաք, 14 քաղա, 58 նահիյէ, 3177 գիւղ :



1. — Տիարպէֆիի սանճաք

1. — Տիարպէֆի	գղխմ. 4	գիւղ 297
2. — Սիւրբ	» 5	» 407
3. — Սիւրբ	» 5	» 222
4. — Լիճէ	» 2	» 133
5. — Տիւրք	» 4	» 78
6. — Պէշիք	» 2	» 173

2. — Մարտիի սանճաք

1. — Մարտի	գղխմ. 2	գիւղ 230
2. — Նասիպի	» 2	» 243
3. — Ճէզրէ	» 2	» 219
4. — Մէտիաղ	» 5	» 226
5. — Աղբիւ	» 2	» 114

3. — Արդրի Մասկի սանճաք

1. — Արդրի	գղխմ. 11	գիւղ 258
2. — Բալէվ	» 7	» 311
3. — Չերմիկ	» 5	» 128

Ժ Է. — Ա Տ Ա Ն Ա

Բնակիչ 425,000. Տարածութիւն 37,550 քառ. ջրմ.  
Ունի 5 սանճաք, 15 քաղա, 21 նահիյէ, 1633 գիւղ :

1. — Ասանայի սանճաք

1. — Ատանա	գղխմ. 4	գիւղ 349
2. — Քարաեասուլու	»	» 88
3. — Համիտիյէ	» 1	» 62

2. — Մերսիի սանճաք

1. — Մէրսի	գղխմ. 1	գիւղ 88
2. — Թարսուս	» 2	» 181

3. — Ճեպիի Պերեֆի սանճաք

1. — Ճէպիի Պերեֆի	գղխմ. 2	գիւղ 8
2. — Ըսլահիյէ	»	» 67
3. — Բայաս	» 1	» 46
4. — Օսմանիյէ	» 2	» 23
5. — Խասսա	»	» 38
6. — Պաղչէ (պուլանըզ)	»	» 40

4. — Գոզանի սանճաք

1. — Գոզան	գղխմ. 1	գիւղ 94
2. — Քարսը Չիւլքատէրիէ	» 1	» 50
3. — Հանըն	» 1	» 66
4. — Յէքէ	» 4	» 94
5. — Սիս	»	»

5. — Իւրլի սանճաք

1. — Իւրլի	գղխմ. 6	գիւղ 66
2. — Էրմէնաք	» 1	» 47
3. — Մուդ	»	» 65
4. — Կիւլնար	» 1	» 53
5. — Անամուք	» 1	» 77



ԺԸ. — ԱՐՔԵՊԻՂԱՔՈՍ (ձեզախրը Պահրը Սէճիս)

Բնակիչ 425,000 : Տարածութիւն 12,860 քառ. քլմ.  
Ունի 4 սանճաք, 14 քաղա, 19 նահիյէ, 238 գիւղ :

1. — Արքեպիսկոպոսի սանճաք

- 1. — Հոռոզոս            գղխմ. 3   գիւղ 45
- 2. — Քաչօղ
- 3. — Միս
- 4. — Սիււնպէքի            »   1
- 5. — Քէրբէ                            »   9
- 6. — Սթանքէօյ (Քօս)    »   1   »   7

2. — Միսիլիի սանճաք

- 1. — Միտիլի            գղխմ. 6   գիւղ 85
- 2. — Բլօմարի
- 3. — Սիւֆրի                            »   4
- 4. — Մօլիվօ                            »   2
- 5. — Եռնտա

3. — Քիոսի (Սաքր) սանճաք

- 1. — Քիոս                    գղխմ. 3   գիւղ 57
- 2. — Քալիմնոս            »   1
- 3. — Լէրօս                            »   1
- 4. — Քարբուբ
- 5. — Ըփսարա

4. — Լիմնոսի սանճաք

- 1. — Լիմպրոս            գղխմ. 3   գիւղ 35
- 2. — Իմպրոզ                            »   6
- 3. — Թէնէտոս (Պօղչա առա)

ԺԹ. — Պ Ի Թ Լ Ի Չ

Բնակիչ 400,000 : Տարածութիւն 29,850 քառ. քլմ.  
Ունի 4 սանճաք, 13 քաղա, 30 նահիյէ, 2107 գիւղ :

1. — Պիքիլիի սանճաք

- 1. — Պիթլիզ                    գղխմ. 4   գիւղ 188
- 2. — Ալալաթ                            »   1   »   33
- 3. — Խիզան                            »   2   »   168
- 4. — Մութիքի                            »   52

2. — Մուշի սանճաք

- 1. — Մուշ                    գղխմ. 3   գիւղ 191
- 2. — Մալազկերտ            »   2   »   126
- 3. — Պուլանքք                            »   1   »   51
- 4. — Վարդօ                            »   2   »   89
- 5. — Սասուն                            »   118

3. — Սղերդի սանճաք

- 1. — Սղերդ                    գղխմ. 1   գիւղ 70
- 2. — Շիրվան                            »   3   »   150
- 3. — Բէրվարի                            »   61
- 4. — Արվա                            »   3   »   205
- 5. — Կազրան                            »   3   »   183



4. — Կիննի սաննաք

1. — Կինն	գլխ. 3	գիւղ 219
2. — Ճապողջուր	» 1	» 91
3. — Գալս	» 1	» 113

Ի. — Մ Ո Ւ Ս Ո Ւ Լ

Բնակիչ 300,000, Տարածութիւն 75,700 քառ. քիւմ:  
Ունի 3 սանձաք, 15 քաղա, 25 նահիլէ, 3331 գիւղ,

1. — Մուսուլի սաննաք

1. — Մուսուլ	գլխամ. 5	գիւղ 506
2. — Սուրճէ	» 2	» 185
3. — Չախու	» 1	» 109
4. — Տէհոք	» 2	» 215
5. — Աքրա	» 1	» 132
6. — Սէնճար	» 2	
7. — Չիպար		

2. — Քերքիւնի կամ Շենր Չորի սաննաք

1. — Քերքիւք	գլխամ. 5	գիւղ 348
2. — Բէվէնտուղ	» 3	» 283
3. — Քէօյսանճաք	» 1	» 121
4. — Բանիլէ		» 90
5. — Էրպիլ	» 2	» 230
6. — Սալահիլէ	» 1	» 91

3. — Սիւլեյմանիէի սաննաք

1. — Սիւլեյմանիէ		գիւղ 139
2. — Կիւլանպեր	գլխամ. 3	» 473
3. — Մամուրէդիւլ Համիա	» 2	» 176
4. — Պագիան		» 158
5. — Շէհրը պազար		» 125

Ց Ո Ւ Ց Ա Կ

Որ կը ցուցնէ Օսմ. Ոսկիին [108-120] զուս (նիքո) արժեքը, 1կն մինչեւ 10% զեղջով

Արժեք Օսմ. Ոսկւոյ	1 0/0	2 0/0	3 0/0	4 0/0	5 0/0	6 0/0	7 0/0	8 0/0	9 0/0	10 0/0
108	109,09	110,20	111,34	112,50	113,68	114,89	116,13	117,39	118,68	120
109	110,10	111,22	112,37	113,54	114,74	115,96	117,20	118,48	119,78	121,11
110	111,11	112,24	113,40	114,58	115,79	117,02	118,28	119,56	120,88	122,22
111	112,12	113,26	114,43	115,62	116,84	118,08	119,35	120,65	121,98	123,33
112	113,13	114,28	115,46	116,66	117,89	119,15	120,43	121,74	123,08	124,44
113	114,14	115,30	116,49	117,70	118,95	120,21	121,50	122,83	124,18	125,56
114	115,15	116,33	117,53	118,75	120	121,28	122,58	123,91	125,27	126,67
115	116,16	117,35	118,56	119,79	121,05	122,34	123,66	125	126,37	127,78
116	117,17	118,37	119,59	120,83	122,10	123,40	124,73	126,09	127,47	128,88
117	118,18	119,39	120,62	121,87	123,16	124,47	125,81	127,17	128,57	130
118	119,19	120,41	121,65	122,92	124,21	125,53	126,88	128,26	129,67	131,11
119	120,20	121,43	122,68	123,96	125,26	126,59	127,96	129,35	130,77	132,22
120	121,21	122,45	123,71	125	126,32	127,66	129,03	130,43	131,87	133,33

Կիրառութիւն. — Հրապարակի վրայ, ինչպէս յայտնի է, առեւտրական գործառնութիւնք տեղի կ'ունենան Օսմ. ոսկին 110, 112 ևն. զըշ. էն հաշուելով և 2, 3 ևն. զեղջ ընելով: Արդ, երբ գնորդն առաջարկէ, զոր օրինակ, Օսմ. ոսկին 112 էն հաշուել և 4% զեղջել, փոխանակ, զիւրութեան համար



Օսմ. ոսկին 146էն հաշուելու, որ սխալ է, կամ նախապէս ընդհանուր գումարէն 4% զեղջելու՝ և ապա 112 զրշ. էն ոսկեղրամի վերածելու, որ կրկին գործողութիւն կը պահանջէ, կը բաւէ այս ցուցակին մէջ նայիլ և 112ին 4% զեղջով 6երօ արժէքը գտնել որ է 116,66: Կրնայ պատահիլ նաև որ գնողը կամ ծախողն առաջարկէ 110 զրշ. ոսկի և 6% զեղջ կամ 114 զրշ. ոսկի և 2% զեղջ: Ցուցակին վրայ արագ ակնարկ մը կը բաւէ այս երկու առաջարկներուն տարբերութիւնն անմիջապէս հասկնալու համար: Ծ.



### Հ Ա Շ ՈՒ Ա Կ Ա Ն

#### ԱՆԳՂԻՍԱԿԱՆ ԳՐԱՄՈՒՆԵՐԸ

Այս ինչ վաճառականին 349 անգլ. ոսկի 16 շիլին և 4 բէնա պարտք մը ունէինք, որու փոխարէն չորս անգամ տարբեր թուականներով զրկած ենք

108 անգլ. ոսկի	10 շիլին	4 բէնա
97 « «	9 «	8½ »
23 « «	9 «	»
67 « «	17 «	11¾ »

Հիմա կ'ուզենք հասկնալ թէ ո՛րչափ պարտքերնիս մնաց:

#### ԼՈՒԾՈՒԾ

Անգլիական դրամները գումարելու համար կարգաւ իրարու տակ կը շարենք սթէրլինները, շիլիններն ու բէնաները, և այս վերջիներէն սկսեալ կը գումարենք: Բէնաներուն կոտորակը գումարելով կ'ուսենանք 1¼ բէնա, ¼ը կը գրենք և 1 ամբողջը կը գումարենք բէնաներուն հետ: Արդիւնքը կ'ըլլայ (32+1)=33: Այս գումարը գծին տակ գրելէ առաջ պէտք է

108.	10.	4
97.	9.	8½
23.	—.	9
67.	17.	11¾
<hr/>		
296.	18.	9¼

դիտենք որ բէնաներուն գումարին մէջ շիլին կա՞յ թէ ոչ: Մէկ շիլինը 12 բէնա ըլլալով, (\*) կը տեսնենք թէ 33 բէնային մէջ 2 շիլին կայ և 9 բէնա միայն կ'աւելնայ: Հետեւապէս 9 բէնան միայն կը գրենք, իսկ 2ը՝ շիլիններուն հետ կը գումարենք: Շիլիններուն գումարն է (2+36)=38: Այս գումարն ալ գծին տակ գրելէ առաջ, կը տեսնենք որ սթէրլին կա՞յ թէ ոչ: Մէկ սթէրլինը 20 շիլին ըլլալով, 38 շիլինին մէջ մէկ սթէրլին միայն կը գտնենք և յաւելեալ 18 շիլինը գծին տակ կը գրենք, իսկ 1 սթէրլինը կը գումարենք սթէրլիններուն հետ և կ'ուսենանք 1+295=296: Այսպէս, մեր զրկած դրամին համագումարը կ'ըլլայ £. 296. 18. 9¼: Գոր կը զեղջենք մեր պարտքէն. —

349. 16. 4

296. 18. 9¼      Բարձուր գործողութեան մէջ, եթէ

52. 17. 6¼ վարի կարգի բէնաներուն գումարը վերինէն մեծ է, շիլիններէն մէկ ամբողջ այսինքն 12 բէնա առնելով կուտանք բէնաներուն և այնպէս կը հանենք: Նոյնպէս, եթէ շիլիններուն վարի կարգը վերինէն մեծ է, ըսթերլինէն մէկ ամբողջ, այսինքն 20 շիլին կ'առնենք և կ'աւելցնենք շիլիններուն վրայ: — Անգլիական դրամներուն բազմապատկութեան և բաժանումին վրայ՝ յաջորդ անգամ:

(\*) Գ. Տետրի Բազդատական ցուցակին Ա. տողին վրայ պէտք է կարդալ 1 շիլին=12 բէնա:





ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍ

ՀԻՒՍԿԷՆ ԿԵՐՊԱՍՆԵՐ

Շրջուն կահերն այսօր այնպիսի կատարելութեան մը հասած են որ շատ բարակ, շատ հաստ, շատ նեղ և շատ լայն հիւսուածոներ կրնան արտադրել: Ասեղնակիր շրջանակին տրամագիծը 5 բուսէն (ֆրանսական մէկ բուսը գրէթէ 27 հազարորդամէդրի հաւասար է) սկսելով 6, 7, 8 եւ մինչեւ 72 բուսի կը բարձրանայ, այն է 2 մէդր: Հիւսուելով դէպ ի վար կախուած կերպասին լայնութիւնը մերձաւորաբար 5 1/2 էն մինչեւ 6 1/2 մէդր կ'ըլլայ: Այս տրամագիծն ունեցող շրջանակ մը միջին հաստութեամբ 4316 ասեղ կը պարունակէ: Միեւնոյն տրամագիծով ասեղնակիր շրջանակին վրայ կրնայ 5 թիւէն մինչեւ 30 թիւ ասեղ հաստատուած ըլլալ: 8, 10, 12, 14 եւն. թիւ ասեղներով հաստ հիւսկէններ կը պատրաստուին, իսկ 28 կամ 30 թիւ ասեղներով կը հիւսուին ամէնէն բարակ նիւթերը, որք կը գործածուին մետաքսէ կամ բամբակէ շատ բարակ ձեռնոցներու կամ մարմնի վրայէ հագնելիք ընտիր շապիկներու շինութեան: Վերոյիշեալ 72 բուսնոց և 4316 ասեղ պարունակող կահը 22 թիւ ասեղի համար է: Արդ, պէտք չէ կարծել թէ շրջանակին տրամագիծը մեծցնելով կը բաւականան, այլ կահին շրջապատի ծաւալին համեմատ 1, 2, 4, 6, 8, 10, 12 և մինչեւ 16 կտմնող գործիքներ կը կցեն, ինչպէս նաև անոր յարակից գործիքները, որոնցմով նոյնչափ տող կը հիւսուի մէն մի շրջանին: Այժմ պարզ եզրակացութեան մը յանգինք: Մենք մեր փոքրիկ հիւսարանին մէջ ունինք 25 բուսնոց շրջուն կահ մը, 22 թիւ ասեղի համար, որ կը պարունակէ 1464 ասեղ: Շուրջը կայ 4 կտմնող գործիք: Այս կահը մէկ վայրկեանի մէջ 10 շրջան կ'ընէ, որով 180էն մինչեւ 230 հարիւրորդամէդր լայնութեան մը վրայ 40 տող

կ'արտադրէ, այն է մէկ վայրկեանի մէջ 58,560 կտիմ: Ուրեմն մէկ ժամուան մէջ 3,483,600 կտիմ, և տասը ժամուան մէջ 30,483,600 կտիմ: Այս հսկայ թիւին բաղդատական եզր մը տալու համար փութանք ըսել թէ, հիւսելու մէջ ամենավարժ մատներ ունեցող կին մը՝ օրական 10 ժամ աշխատելով՝ հազիւ 3 տարիէն պիտի կրնար 30 միլիոն կտիմ շինել, թողո՛ւնք որ կարելի չէ գուրպիճաղով երկու մէդր լայնութեամբ հիւսկէն պատրաստել ձեռքի վրայ միօրինակ կերպով: Ա՛լ երեւակայելու է 40, 45, 50 և մինչեւ 72 բուսնոց շրջուն կահերը, որք 10, 14 կամ 16 կտմնող գործիքներ ունենան: Գանք ուրիշ կէտերու: Որպէս զի հիւսուած կերպասը շրջուն կահին հետ շրջելով հանդերձ տեղ մը հաւաքուի, գետնի մակերեսէն 8 — 10 հարիւրորդամէդր բարձրութեամբ բոլորչի տաշտ մը շինուած է, որ կահին կցուած ըլլալով անոր հետ մէկտեղ կը դառնայ և հիւսուած կերպասն իր մէջ կը հաւաքէ: Հիւսուած կերպասն ասեղներէն դէպի վար քաշող գործիք մ'ալ կայ tirage automatique (ինքնաքաշ) անունով: Այսօր այս կահերը շոգիի կամ կազի զօրութեամբ կը դառնան, վերէն դէպի վար իջնող փոկի մը միջոցաւ: Թեյին բարակութեան և հիւսկէնին տրուելիք թանձրութեան համեմատ, իւրաքանչիւր կտմնող գործիքի վրայ կրնայ 1էն մինչեւ 4 թիւ դրուել, որով եթէ և կտմնող գործիք կայ, 16 թիւով կը բանուի, և եթէ այս թիւերէն մէկը պատահամբ բրդի կամ հատած ըլլալով հսկող գործաւորին աչքէն վրիպի, կա՛նք վայրկեանապէս կանգ կ'առնէ: Այն ատեն, հսկող գործաւորը կը փնտռէ թէ ո՞ր թիւը բրդեր կամ հատեր է և շուտով կը կցէ զայն ու կահը նորէն շարժման մէջ կը դնէ: Այս ազդարարութիւնն ընողը կը կոչուի casse-fil (թիւհատ): Կրնայ պատահիլ նաև որ ասեղ մը փխսուի, վեր կամ վար ծռի, կտորի, կամ հիւսուած թիւին մէջ բամբակի կամ բուրդի աւելորդ մասնիկ մը գտնուի և կամ՝ ո՞ր եւ է թերութեան մը պատճառաւ՝ հիւսկէնին վրայ ծակ մը բացուի: Այս պարագային կահը վայրկեանաբար կանգ կ'առնէ մասնաւորապէս զետեղուած գործիքի մը միջոցաւ որ կը կոչուի ազդարար (révélateur): Հսկողը՝



կահին կենալուն պատճառը քննելով հասկնալով՝ խոչընդոտը կը բառնայ ու կահը դարձեալ շարժման մէջ կը դնէ : Մեքենական կատարելութիւնը դեռ հոս չի վերջանար : Կըտմնող գործիքը 30 տարի առաջ նոր կատարելութեամբ մը եւս օժտուած է : Այս վերջին կատարելագործեալ կտմնողը նախորդին գրէթէ կրկին տրամագծովն է : Մէջի կողմը գետեղուած են արաքսամուղիչն ու ճնշիչը, այնպէս որ թելքաշն ու ձեւացումը միեւնոյն ատեն կը կատարուին : Հետեւապէս Փուքէյի դրութեամբ պատրաստուած կտմնող գործիքը կը կոչուի հասարակ կսմնող (maillieuse ordinaire), եւ նոր դրութեամբ պատրաստուածը՝ մեծ կսմնող (grande maillieuse) :

Մ. ԳԱԼԷՆՏԷՐ

## ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կանխիկ վաճառում, կանխիկ գնում. (Յօդ. 17 և 18) .  
 — Կանխիկ կը կոչուին այն գնումներն ու վաճառումներ, որոց փոխարժէքն անմիջապէս կամ կարճ պայմանաժամէ մը ետքը կը հատուցուի : Հաշուակալութեան մէջ, կանխիկ բառը կը վերապահուի այն գործողութեանց որք անմիջապէս կը կարգադրուին և կ'ըլլան այնպիսի անձերու հետ, որոց համար հաշիւ բացուած չէ տեսարակներուն մէջ, Կարելի է սովորական հայթայթիչէ մը կանխիկ գնում մը ընել, բայց հայթայթիչը պէտք է հաշիւ մ'ունենայ և եղած գործառնութիւնն արձանագրուի հոն և ո՛չ թէ « Կանխիկ Գնում » ի տեսրին մէջ : Այսպէս է նաև վաճառումներու համար : « Կանխիկ Գնում » կամ « Կանխիկ Վաճառում » հաշիւները հաւաքական հաշիւներ են և յատկացուած են այն գնողներուն կամ ծախողներուն որոց հետ վաճառատունը քիչ գործ կ'ընէ : Կանխիկ գնման հաշիւը՝ պահանջող կ'ըլլայ գնումներու համար, և պարտական՝ վճարումներու համար : Կանխիկ վաճառումի հաշիւն ալ պարտական կ'ըլլայ վաճառումներու և

պահանջող՝ վճարումներու համար : Այս հաշիւները հաւասարութիւն կը պահեն Օժանդակ տեսարակներուն և Օրհաշիւին գումարներուն միջեւ : 17րդ յօդուածը Գնման Տեսրէն եկած է, և 18րդ-ը Սնտուկի Տեսրէն, որով երկու յօդուած Օժանդակ Տեսարակներու մէջ կ'ըլլայ և երկու յօդուած՝ Օրհաշիւին մէջ : Կրնայինք ըսել « Սնտուկ՝ Ընդհանուր Ապրանքին », բայց այն ատեն Օրհաշիւին մէջ մէկ, իսկ Օժանդակ Տեսարակներուն մէջ երկու յօդուած պիտի ըլլար, մին Սնտուկի Տեսրին և միւսը Վաճառման Տեսրին մէջ, և բընականաբար Օրհաշիւին գումարը հաւասար պիտի չգար Օժանդակ Տեսարակներու գումարին հետ :

Պայմանաժամով գնում. (Յօդ. 19). — 2 սնտուկ բժոժական մետաքս գնուեցաւ Պուտօնէ : Արժէք 90/100 օր : Բացատրութիւնը տեսնել Յօդ. 12ի մէջ :

Ձեռն ու ռան. — Տոկոս եւ Յանձնարարողչեք. (Յօդ. 21). — 100 օրուան մէջ 6%<sup>0</sup> դեղչ մը շահելու համար վճարուեցաւ Պուտօնի հաշուեցոյցը, Բր. Լիօնէի վրայ չէքով մը : Պուտօն մեղ կը պարտի 132,25ի դեղչ մը : Ուրեմն պարտական կ'ընենք դայն և Տոկոս ու Յանձնարարողչէք հաշիւը՝ պահանջող : Այս « Տոկոս եւ Յանձնարարողչէք » հաշիւը « Ձէն ու Շահ » ին մէկ բաժանումն է : Թէեւ քիչ մը դժուար կ'երեւայ այս երկու հաշիւներուն յօդուածներն անցընել, բայց անոնք ալ միւս հաշիւներուն չափ պարզ են : Կը բաւէ հետեւեալ կանոնը միտք պահել . —

Ամէն յիշատ « Ձէն ու Շահի » պարտքին կողմը կ'անցնի և Ամէն շահ « « « պահանջքին « «

Տոկոս և Յանձնարարողչէք, Ընդհանուր ծախք ևն. հաշիւները, որք « Ձէն ու Շահ » ին ստորաբաժանումներն են, պէտք է նոյն սկզբունքով բռնուին : Վերի կանոնը դիւրաւ կը բացատրուի : Գործին սկզբնաւորութեան ատեն բացուած « Դրամագլուխ » հաշիւը պահանջող եղած է դրուած գումարին համար : Արդ, բոլոր շահերը դրամագլուխը կ'աւելցնեն և հետեւապէս պահանջքին կողմը պէտք է անցնին : Վնասներն ալ դրամագլուխը կը պակսեցնեն և հետեւապէս պահանջքէն զեղչելու կամ որ նոյնն է պարտքին կողմն անցընելու է դասնը :



**Օ Ր Հ Ա Շ Ի Ի**  
Գրիգորեան եղբարց

	12	6 Հոկտ. 1901			
14	22	<b>Ընդհանուր Ապրանք</b> Մեր գնումը, արժէք 90 օր	<b>Քառիւսի</b>	7235	7235
	13	Նոյն			
22	17	<b>Քառիւր</b> իւր Յուղձը, Յնվր. 4ին	<b>Վնարեղի Թուղթին</b>	7235	7235
	14	7			
6	9	<b>Ընդհանուր Ծախս</b> Թղթագանառին հաշուեցոյցը	<b>Սնտուկին</b>	128	128
	15	9			
6	9	<b>Ընդհանուր Ծախս</b> Փորը ծախսերու համար	<b>Սնտուկին</b>	100	100
	16	Նոյն			
5	9	<b>Կարասի</b> կարասիի համար վճարում	<b>Սնտուկին</b>	328	328
	17	Նոյն			
18	14	<b>Կանխիկ Վստահում</b> Ընդհանուր Ապրանքին Մեր վճա. 3 ծրար կերպաս		716 20	716 20
	18	Նոյն			
9	18	<b>Սնտուկ</b> Մեր վճառման փոխարժէքը զանձուած	<b>Կանխիկ Վստահումի</b>	716 20	716 20

490213 9 549  
Նոյն

Գրիգորեան եղբարց  
Ընդհանուր Ապրանք  
Մեր գնումը, արժէք 90 օր  
Նոյն  
Քառիւր  
իւր Յուղձը, Յնվր. 4ին  
Վնարեղի Թուղթին  
7  
Սնտուկին  
Թղթագանառին հաշուեցոյցը  
9  
Փորը ծախսերու համար  
Սնտուկին  
100  
Նոյն  
Կարասի  
կարասիի համար վճարում  
Սնտուկին  
328  
Նոյն  
Կանխիկ Վստահում  
Ընդհանուր Ապրանքին  
Մեր վճա. 3 ծրար կերպաս  
Նոյն  
Սնտուկ  
Մեր վճառման փոխարժէքը զանձուած



Գ Ի Ն Բ . Հ Ա Տ Ո Ր Ի

12 ՂրուՇ

Գաւառաց հասկար՝ իբր բոսսի ծախս՝ 3 դրուշ աւելի

ԿԱՆՆԻԿԻ ՀԱՄԱՐ 15 % ԶԵՂԶ

Հասցե . — ՍԻՄՅՈՆ ԶԷՕՄԼԷՔՃԵԱՆ

Ի Խմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաբերքի

Պապր Աշի ճասճեսի թիւ 23—25 Կ. Պոլիս

Կամ

Ի ԶՄԻՏ ՕԹԷՂ, ԹԻԻ 21

Կ. Պոլիս, Էսկի Զապրիե ճասճեսի

12 Ղրուշ

Հանրագիտակի

11 թիւը հրատարակուեցաւ պատկերազարդ Նշան

Կ. Պէրպէրեան տպարանէն ճոխ պարունակութեամբ:

Շատ հայրեր՝ իրենց տղոց ձեռքը տալիք գիրք մը, հանդէս մը կը փնտռեն, արդեօք չափազանցութիւնն կ'ըլլայ եթէ ըսենք որ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, մէկ հատիկը կրնայ հանդիսանալ ընտանիքներու մէջ թափանցող և դպրոցականներու յատուկ է:

Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ համար 40, վեցամսեայ՝ 20, եռամսեայ՝ 10 դհկ: Հատը 40 փարայ:

Գաւառները՝ տարեկան 45, վեցամսեայ՝ 25, եռամսեայ՝ 12½ դհկ: Հատը 50 փարայ:

Հասցե՝ — ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ,

Կ. Պոլիս, Էսկի Զապրիե ճատաէսի, թիւ 61:

ՄԷՃԷՂԷ

Կամ ՕՍԽ . ԲԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԳԻՐՔ, հինգ հատոր, անդեղջ 20 դրշ. — Կիսակաշի գեղակազմ՝ 25 դրշ: — Կեդրոնատեղի, Զաքմաքճըլար, աղբիւրին կարգը, կազմարար Արշակ Մանուկեանի կազմատունը:

معارف نظارت جلیله سنک ۳۰۳ نومرولی و فی ۱۶ تشرین اول

سنه ۳۱۶ تاریخلو رخصتنامه سیله طبع اولمشدر



«Ազգային գրադարան»



NL0083828



